ես առաւել պարտական եմ խօսել ընդ ձեզ քան զայլսն. ըստ Առաքելոյն՝ Թէպէտ այլոց չիցեմ առաքեալ, այլ դէպ ձեզ եմ, զի զվարդապետական իշխանութիւնն եւ զայլ հոգեւոր պատիւս կամօք մերովք եւ ի մէնջ ըստացեալ էք. զի թէ լռեցիս իբրեւ զՀեղի՝ վրիպակացն եւ ես դիպեցայց։

Իմացէք, սիրելիք, որ ազգ առնեմ ձեզ զի այդ նորաձեւ աղանդն եւ մանաւանդ դաւանութիւնդ, որ յամենայն օր ասէք յառաւօտն եւ յերեկոյն, այդ Նեստորի եւ երկաբնակ Քաղքեդոնի դաւանութիւն է։ Նախ այն որ ասէ. Մեռեալ մարմնով եւ կենդանի աստուածութեամբն, զի ասէ սուրբ Հայրապետն Ներսէս ի կատարումն դաւանութեան իւրոյ, ի Խոսրովանիմն.

Ոչ ոմն անմահ եւ ոմն մեռեալ
Զի այս երկուքն են բաժանեալ
Այլ որ անմահ, նոյն եւ մեռեալ
Եւ որ մեռեալ՝ անմահ մնացեալ.

զի

Որպէս ծընունդ սքանչելի
Նոյնպէս եւ մահն հրաշալի.
Եւ երկոքեանն անքննելի
Զի Աստուծոյ է արարչի։

Ով սիրելի, դու ասես՝ Մեռեալ մարմնով եւ կենդանի Աստուածութեամբ, զի ջուր